ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ XII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2010 թ. հոկտեմբերի 25–27-ը կայացավ «Հայաստանի և հարակից երկրների ազգաբանություն և հնագիտություն» թեմայով գիտաժողովը, որը համախմբել էր Հայաստանի և հարակից երկրների ազգաբանությամբ, հնագիտությամբ և բանահյուսությամբ զբաղվող հայաստանյան և արտերկրացի երիտասարդ՝ մինչև 35 տարեկան հետազոտողների: Գիտաժողովի մասնակիցներից 57-ը Հայաստանից էին, 6-ը՝ Վրաստանից, 4-ը՝ ԱՄՆ-ից, 2-ական մասնակիցներ՝ Լեհաստանից, Ռուսաստանից, Գերմանիայից, Ռումինիայից, և մեկական մասնակիցներ Բելգիայից ու Իրանից: Հայաստանյան մասնակիցների կեսից ավելին Հնագիտության և ազգագրության ինստիտուտից էին՝ 25 զեկուցող, և Երևանի պետական համալսարանի պատմության և այլ ֆակուլտետներից՝ 13 զեկուցող:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) տնօրեն* Պավել Ավետիսյանը, *ինստիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի վարիչ* Լևոն Աբրահամյանը, *Երիտասարդ գիտնականների խորհրդի (ԵԳԽ) նախագահ* Ռոման Հովսեփյանը, *ԵՊՀ հնագիտության ամբիոնի վարիչ* Հայկ Ավետիսյանը *և ուրիշներ:*

Բացման արարողությունից հետո, նաև հետագա օրերին գիտաժողովը շարունակվեց «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ»-ին պատկանող մասնաշենքում: Գիտաժողովում ներկայացվեց 62 զեկուցում, որոնցից մի քանիսի զեկուցողները ֆիզիկապես ներկա չէին. բոլոր բացակայող զեկուցողներին հնարավորություն էր տրված գիտաժողովին մասնակցել ինտերնետային ուղիղ կապի միջոցով: Շատ մասնակիցներ զեկուցում էին ունենում առաջին անգամ, նաև առաջին անգամ էին ներկայացվում շատ թեմաներ: Գիտաժողովն անցկացվեց երկու նստաշրջաններով՝ խմբավորված ազգաբանության և հնագիտության թեմաների ներքո:

Ազգաբանության վերաբերյալ զեկուցումները խմբավորվել էին ըստ հետևյալ թեմատիկ խմբերի՝

«Ինքնություն». *«Համփորդող ինքնություն. ուտեստները ուղեբեռներում»* (Ռ. Ծատուրյան, *ՀԱԻ), «Ս. Պետերբուրգի հայերի էթնիկ ինքնության մասին (ըստ խոհարարական պրակտիկայի դիտարկման և հարցումների նյութերի)»* (Եվ. Գուլյանա, *Ռուսաստանի ազգագրական թանգարան, Ռուսաստանի Դաշնություն), «Ազգային ինքնության դրսևորումներն ու կառուցումը Երևանի ժամանակակից դպրոցներում «Վերջին զանգ»-ի արարողություններում»* (Ս. Մկրտչյան, *ՀԱԻ, Թբիլիսիի Իվ. Ջավախիշվիլու անվ. պետական համալսարան):*

«Ինքնություն և Սփյուռք». *«Սփյուռքի տեսության վիճարկումն ազգաբանական դիտանկյունից»* (Ա. Հարությունյան, *Բեռլինի Հումբոլտի անվ. համալսարանի Ազգաբանության ինստիտուտ; Բեռլինի ազատ համալսարանի Ազգաբանության ինստիտուտ, Գերմանիա), «Երկակի իրականություն. միգրանտի դիրքորոշումները հայրենիքում և արտերկրում»* (Ա. Պողոսյան, *ՀԱԻ), «Հայերը Կրակովում. լեհահայերը և հայկական նոր սփյուռքը»* (Յ. Օսիեցկի, *Հովհաննես Պողոս 2-րդի անվ. Հայրապետական համալսարան, Լեհաստան), «Դիտարկումներ լեհահայոց համայնքի ինքնության շուրջ»* (Փ. Մնացականյան, *Յագելոնյան համալսարան, Լեհաստան):*

«Հանրային միջավայր և մշակույթի ընկալման դրսևորումներ». *«Մշակույթի հասարակական ընկալումները»* (Մ. Թորոսյան, *ԵՊՀ), «Անուղղակի վանդալիզմ»* (Ա. Դիլանյան, *ՀԱԻ), «Էթիկետը հասարակական տրանսպորտում»* (Լ. Քևնակսզյան, *ՀԱԻ):*

«Երիտասարդական, մասնագիտական ենթամշակույթներ՝ կրթություն, քաղաքականություն, հասարակական կազմակերպություններ». *«Մասնագիտական կրթության որակի արդի հիմնախնդիրները. դիսկուրս վերլուծություն»* (Մ. Գալստյան, *ԵՊՀ), «Քաղաքական արժեքները երիտասարդների ընդհանուր արժեքային համակարգում»* (Ա. Ավետյան, *ԵՊՀ), «Կրոնական հակադրությունը Պանկիսի շրջանի սերունդների միջև»* (Ն. Սիփրաշվիլի, *Վրաստանի համալսարան), «Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորման խնդիրն էթնոմշակութային համատեքստում»* (Ն. Գալստյան, *ՀԱԻ), «Հաշմանդամ - ոչ հաշմանդամ փոխհարաբերությունը»* (Կ. Ավագյան, *Հովհ. Թումանյանի տուն-թանգարան), «Որբ երեխան հայոց ավանդական մշակույթում»* (Ա. Մնացականյան, *ԳԱԱ ՀԱԻ),*

«Քաղաքի ազգաբանություն». *«Քաղաքային նոր խորհրդանշանների ներկայացումը և ստեղծումը»* (Հ. Մելքումյան, *ՀԱԻ, ԵՊՀ), «Ազգային խորհրդանիշերը երևանյան մշակութային միջավայրում»* (Դ. Տեր-Ղազարյան, *Ֆլորիդայի միջազգային համալսարան, ԱՄՆ), ««Աչքի փշեր» նոր Երևանում»* (Ա. Հարությունյան, *Բեռլինի Հումբոլտի անվ. համալսարանի Ազգաբանության ինստիտուտ, Բեռլինի ազատ համալսարանի Ազգաբանության ինստիտուտ, Գերմանիա), «Իջևանի «Արձանների այգին»* (Մ. Հմայակյան, *Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա), «Երևանի կենտրոնի քաղաքային տարածքի սեմիոտիկ կառուցվածքը և փոխակերպումը»* (Ն. Եպիսկոպոսյան, *Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, Հայաստան):*

«Գենդերային հետազոտություններ». *«Միջնադարում հայ կնոջ իրավունքներն ամուսնաընտանեկան հարաբերություններում (ըստ իրավական և մատենագիտական նյութերի)»* (Ք. Սարգսյան, *Գյումրիի պետական մանկավարժական համալսարան), «Հայաստանի աշխատավորուհի». հայ կնոջ նոր կերպարի ստեղծումը նոր Հայաստանի համար 1924-1929 թթ.»* (Ջ. Ջոնսոն, *Միչիգանի համալսարան, ԱՄՆ), «Կինը և պատիվը Վրաստանի Հանրապետությունում»* (Է. Կամմ, *Մշակութային համեմատական հետազոտությունների ինստիտուտ, Ֆիլիպսի համալսարան, Գերմանիա), «Զբաղվածության և ընտանեկան հիմնախնդիրները Կապանում»* (Ա. Վանյան, *ՀԱԻ), «Ամուսնության և սեքսուալության «դիսպոզիտիվների» փոխհարա-*

բերման դրսևորումները հայաստանյան նույնասեռականների առօրյայում» (Ա. Մանուկյան, *ԵՊՀ):*

«Ժամանցի և տոնի ազգաբանություն». *«Արդի մարզային ժամանցի կազմակերպման որոշ խնդիրների շուրջ (Սյունիքի մարզի Գորիս քաղաքի և շրջակա երկու գյուղերի օրինակով)»* (Գ. Ստեփանյան, *ՀԱԻ), «Եկեղեցական հանդիսությունների և ժողովրդական տոների նշանակությունը Փշավիում»* (Մ. Ծերեթելի, *Վրաստանի համալսարան), «Բերդ-Շամշադինի ժողովրդական խաղերը (20-րդ դ.)»* (Հ. Գյոզալյան, *ԵՊՀ), «Խաղային համակարգը Թալինում և Արտաշատում (ըստ 2008-2009 թթ. գիտարշավի նյութերի)»* (Հ. Ասատրյան, *ՀԱԻ), «Պարի և հացի կապը հայ հարսանիքում»* (Ն. Շամամյան, *ՀԱԻ), «Թուրքական հարսանեկան ծեսը»* (Դ. Հարությունյան, *ԵՊՀ):*

Բանագիտության վերաբերյալ զեկուցումներն էին. «Մահվան և հանդերձյալ կյանքի մասին պատկերացումները սկյութների շրջանում և դրանց արձագանքներն օսական ավանդույթում» (Ս. Դավթյան, *ԵՊՀ), «Քաչլուկ» նվիրագործյալը հայկական հրաշապատում հեքիաթներում»* (Լ. Մկրտումյան, *ՀԱԻ), «Հայրեր - որդիներ հակամարտությունը հայկական ժողովրդական հեքիաթներում և «Սասնա ծռեր» դյուցազնավեպում»* (Ս. Անանյան, *ԵՊՀ):*

Հնագիտության նստաշրջանի զեկուցումները խմբավորվել էին ըստ ժամանակագրական թեմաների՝ նոր քարիդարից ուշ միջնադար.

«Նեոլիթի ուսումնասիրությունը Հայաստանում» (Ա. Պետրոսյան, *ՀԱԻ), «Ծաղկասար-1 վաղ բրոնզեդարյան բնակատեղիի խեցեղենը»* (Ի. Հովսեփյան, *ՀԱԻ), «Կուր-արաքսյան խեցեղենի զարդարման հիմնական եղանակները»* (Ա. Ազիզյան, *Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան), «Թռեղքյան մշակույթի գեղարվեստական մետաղագործության որոշ հարցերի վերաբերյալ»* (Դ. Նարիմանիշվիլի, *Պատմության, հնագիտության և ճարտարագիտության «Կլդեկարի» թանգարան-արգելոց, Վրաստան), «Թռեղքյան մշակույթի բրոնզե կացինների թվագրման, զարգացման փուլերի և տիպաբանության մասին»* (Զ. Շերազադիշվիլի, *Թբիլիսիի պետական համալսարան), «Աղթիքի նորահայտ վիշապաքարը և վիշապաքարերի տարածման սահմանների խնդիրը»* (Ա. Բոբոխյան, *ՀԱԻ), «Հայաստանից հայտնաբերված մի քանի բազմանիստների մասին»* (Ա. Գաբրիելյան, *ՀԱԻ), «Ուրարտական երկաթակուռ դաշույնները»* (Ա. Զաքարյան, *«Էթնոս» էթնոմշակութային գիտական հետազոտությունների կենտրոն), «Խալդիի, Թեյշեբայի և Շիվինիի պատկերագրությունն ըստ Անձավի վահանի և նրանց հին մերձավորարևելյան հնարավոր որոշ զուգահեռները»* (Մ. Բադալյան, *«Էթնոս», էթնոմշակութային գիտական հետազոտությունների կենտրոն), «Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենը որպես պատմական աղբյուր»* (Ա. Նախշքարյան, *ՀԱԻ), «Երվանդաշատի միջնադարյան հուշարձաններն ըստ պատմական աղբյուրների և նոր հնագիտական ուսումնասիրությունների», «Հայաստանի վաղքրիստոնեական արվեստում անտիկ ավանդույթների հարցի շուրջ»* (Լ. Միքայելյան, *ԵՊՀ), «Հայաստանի վաղմիջնադարյան թաղումների դասակարգման փորձ»* (Դ. Միրիջանյան, *ՀԱԻ), «Վաղ քրիստոնեական շրջանի մկրտարաններ Սև ծովի*

արևելյան ափին» (Ի. Բերձենիշվիլի, *Վրաստանի ազգային թանգարանի Հնագիտության ինստիտուտ), «Հյուսիսային Հայաստանի միջնադարյան առևտրային ուղիների և քաղաքական տնտեսության հետազոտության նախնական արդյունքները»* (Ք. Ֆրանկլին. *զեկուցումը ներկայացրեց* Է. Ֆագանը, *Չիկագոյի համալսարան, ԱՄՆ), «XI դ. բյուզանդական պղնձե դրամների գանձ Ծաղկաձորից»* (Հ. Հովհաննիսյան, *Հայաստանի պատմության թանգարան), «Հայաստանի վաղքրիստոնեական սրբազան լանդշաֆտի կազմավորման մի քանի սկզբունքների մասին»* (Է. Հովհաննիսյան, *ԵՊՀ), «Լույսի քրիստոնեական խորհրդի դրսևորումը վաղքրիստոնեական լուսային անվանաբանության մեջ»* (Ռ. Սարգսյան, *ԵՊՀ), «Եկեղեցուն նվիրատվություն կատարելու ևս մի պատճառ»* (Հ. Հակոբյան, *ՀԱԻ), «Մասունք-պահարան Հովհաննես Մկրտչի աջով»* (Ա. Բաբաջանյան, *ՀԱԻ), «Կոմմունիստում իշխած արքայական ակունքները»* (Լ. Ասրյան, *ԳԱԱ Պատմության ինստիտուտ), «Դրամահատությունը և իշխանությունը Հայկական բարձրավանդակում՝ ըստ Հայաստանի և Հռոմի օրինակների»* (Է. Ֆագան, *Չիկագոյի համալսարան, ԱՄՆ), «Նորահայտ արձանագրություններ «լիտր» կշռաչափի վերաբերյալ»* (Ա. Հարությունյան, *ՀԱԻ), «Նորահայտ արձանագրություններ Մեծ Այրում բնակավայրից»* (Ս. Ադամյան, *ՀԱԻ), «Զինվորների զենքն ու ասպագենը Պարթևական Իրանում և Միջին Ասիայում»* (Ա. Նալբանդյան, *ԵՊՀ):*

Գիտաժողովում ներկայացվեցին նաև միջմասնագիտական նորարարական հետազոտությունների արդյունքներ, որոնք սերտ առնչություն ունեն հնագիտության, ազգաբանության և բանագիտության հետ. «Նախնական տվյալներ Գոդեձորի պղնձի-քարեդարյան բնակատեղիի (Հայաստան) փայտածուխի ուսումնասիրության վերաբերյալ» (Ռ. Հովսեփյան, *ՀԱԻ), «Իրանում բնակվող ֆարսերի, ազերիների և հայերի գենետիկական պատմությունը ըստ արական գծի»* (Ա. Մարգարյան, *ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ), «Պարսկերենում պաշտամունքային նշանակություն ունեցող որոշ բուսանունների ստուգաբանական դիտարկումներ»* (Ն. Բալաբանյան, *ԵՊՀ), «Նռան ուսումնասիրությունը հնաբուսաբանության և էթնոբուսաբանության տեսանկյուններից»* (Ն. Ստեփանյան, *ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ):*

Զեկուցումների ընթացիկ և ամփոփիչ քննարկումների ժամանակ իրենց հարցերով, դիտողություններով, մեկնաբանություններով և խորհուրդներով ակտիվ մասնակցություն ունեցան ազգաբանության ու հնագիտության ոլորտների ճանաչված մի շարք մասնագետներ:

Գիտաժողովից հետո՝ հոկտեմբերի 28-ին արտերկրացի հյուրերի համար կազմակերպվեց ճանաչողական արշավ (Սբ. Հռիփսիմեի, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի եկեղեցիներ, Մեծամորի հնավայր և թանգարան, Սարդարապատի հուշահամալիր և թանգարան):

ՌՈՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ